Հ. Մ. ԴՐԻԳՈՐՅԱՆ

ՍԻՐԻԱՅԻ ՊԱՅՔԱՐԸ «ԻՐԱՔ ՓԵԹՐՈԼԻՈՒՄ ՔՈՄՓԱՆԻԻ» ՀԵՏ ԿՈՆՑԵՍԻՈՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ

1963 թ. մարտին Սիրիայում իշխանության գլուխ անցնելուց հետո Բաաս կուսակցությունը ներքին քաղաքականության բնագավառում առաջին պլան մղեց երկրի տնտեսական զարգացման մեջ պետության գերի ընդարձակման խնդիրը։

Քաղաքական և սոցիալ-տնտեսական առաջադիմության ճանապարհին կարևոր քայլ էր երկրի բոլոր բնական հարստությունների, ինչպես նաև դրանց մշակմամբ զբաղված տեղական և օտարերկրյա ընկերությունների ազգայնացումը։

Ազգայնացումը անմիջականորեն հարվածեց նաև խոշորագույն իմպերիալիստական նավթային մոնոպոլիաների, մասնավորապես «Սոկոնի Վակումի», «Շելլի» և «Էսսոի» շահերին[1]։ Ինչպես հայտնի է, միջազգային նավթային կառտելի շրջանակներում միավորված և այսպես կոչված անկախ նավթային ընկերությունները 60-ական թվականների նախօրեին նավթ արդյունահանող արաբական երկրներում ոչ միայն դեռ պահպանում էին իրենց տիրապետող դիրքերը, այլ նաև էական բացասական ազդեցություն էին թողնում Մերձավոր արևելքի ընդհանուր քաղաքական իրադրության վրա[2]։

Ազգայնացնելով նավթային մոնոպոլիաների սեփականությունը, Սիրիան ակնառու ձևով ցույց տվեց արաբական աշխարհում իմպերիալիզմի ազդեցության քաղաքական-տնտեսական հիմնական օջախները հաջողությամբ վերացնելու հնարավորությունն ու ուղիները։ Եվ այս տեսակետից սիրիական ղեկավարության գործողությունները կարելի է իրավացիորեն դիտել նաև որպես ընդհանրապես Մերձավոր արևելքում

իմպերիալիստական տերությունների դիրքերն արմատախիլ անելուն ուղղված քայլեր։

Սիրիայի արտաքին քաղաքականության այս գիծը, որն արմատական դարգացում ստացավ 1966 թ. Բաաս կուսակցության ձախ թևի իշխանության գալուց անցնելուց հետո, չէր կարող լուրջ անհանգստություն առաջ չբերել նավթային մոնոպոլիաներում և նրանց ետևում կանգնած իմպերիալիստական շրջաններում, Իսրայելում և արաբական հետադիմական երկրներում։ Այս անհանգստությունը տագնապի վերածվեց այն բանից հետո, երբ Սիրիան «Իրաք փեթրոլիում քոմփանի» նավթային կոնսորցիումի դեմ մեղադրանք հարուցեց Սիրիայի տարածքով իրաքյան նավթի տեղափոխման կոնցեսիոն համաձայնագրի կոպիտ խախտումների վերաբերյալ։

Այդ մեղադրանքը մանրամասն հիմնավորված էր «Իրաք փեթրոլիումի» դիրեկտորների խորհրդին ուղղված 1966 թ. օգոստոսի 28 թվագիր հուշագրում։ Դրանում մասնավորապես ընդգծվում էր, որ ընկերությունը կեղծ հաշվետվություններ ներկայացնելով, տաս տարվա ընթացքում միտումնավոր իջեցնում էր Սիրիայի օգտին կատարված կոնցեսիոն մասնահանումները և արդյունքում՝ չի վճարել նրան 40 միլիոն անգլիական ֆունտ ստեռլինգ։ Այս կապակցությամբ, և ելնելով սիրիական ժողովրդի ազգային շահերը պաշտպանելու պահանջից, Սիրիական կառավարությունը կտրականորեն պահանջում էր կոնցեսիոն մասնահանումների բարձրացում 50%-ով և պարտքի մարում[3]։

«Իրաք փեթրոլիում» նավթային ընկերությունում նավթային մոնոպոլիաների մասնակցությունը հետևյալ հարաբերությամբ էր. անգլիական «Բրիթիշ փեթրոլիում»՝ 23,75%, անգլո-հոլանդական «Ռոյալ Դատչ-Շելլ»՝ 23,75%, ֆրանսիական «Կոմպանի ֆրանսիզ դը պետրոլ»՝ 23,75%, ամերիկյան «Սթանդարթ օյլ քոմփանի օֆ Նյուջերսի» և «Մոբիլ օյլ»՝ 11,75-ական % և «Շելլին» հարող «Փարթեքս»՝ 5%[4]։ Հարկ է նշել, որ «Բրիթիշ փեթրոլիումի» բաժնետոմսերի վերահսկիչ ծրարը (մոտ 56%) պատկանում էր Անգլիայի կառավարությանը, իսկ ֆրանսիական կառավարությունը վերահսկում էր «Կոմպանի ֆրանսեզ դը պետրոլի» բաժնետոմսերի 35%-ը և վարչության ձայների 40%-ը[5]։

Այդ երկրները շահագրգռված էին կոնսորցիումի գիրքերի ամրապնդման մեջ, ելնելով և՛ իրենց մերձավորարևելյան ստրատեգիայի և՛ եկամուտների բաժանման մեջ իրենց անմիջական մասնակցության պահանջներից։

Դեռևս 40-ական թթ. «Բրիթիշ փեթրոլիումի» և անգլիական կառավարության միջև գաղտնի համաձայնագիր էր կնքվել, ըստ որի ընկերությանը հնարավորություն էր տրվում կոնցեսիոն ծախսերի մի մասը վճարել այն գումարի հաշվին, որը հաշվարկվում էր որպես անգլիական գանձարկղ մտնող եկամտահարկ։ Համանման համաձայնագրեր էին կայացվել նաև կոնսորցիումի մյուս մասնակիցների հետ։ Միայն այդ համաձայնագրի միջոցով 1952—1972 թթ. «Իրաք փեթրոլիումը» լրացուցիչ շահել էր 7 միլիարդ ֆունտ ստեռլինգ[6]։ Այսպիսով արհեստականորեն իջեցվում էր ընկերության փաստացի շահերի գումարը, ինչը և նրան հնարավորություն էր ընձեռում էականորեն կրճատել Իրաքի և Սիրիայի կառավարություններին կատարվող կոնցեսիոն մասնահանումները[7]։

Սիրիայի և «Իրաք փեթրոլիումի» միջև բանակցությունների առաջին փուլը տեղի ունեցավ Դամասկոսում 1966 թ. սեպտեմբերի 10-ից 17-ը։ Սեպտեմբերի 18-ին ընկերության ներկայացուցիչները ընդհատելով բանակցությունները մեկնեցին Լոնդոն, որն իբրև կապված էր դիրեկտորների խորհրդի հետ խորհրդակցելու և անհրաժեշտ փաստաթղթեր պատրաստելու հետ[8]։

Պարզ է, սակայն, որ այդ որոշումը իրականում բոլորովին այլ պատճառ ուներ։ Ընկերության ներկայացուցիչների գրաված դիրքը անմիջապես և համոզիչ կերպով ցույց տվեց, որ ընկերությունը ոչ միայն չի ձգտում լուծել խնդիրը, այլ նաև մտադիր է ամեն կերպ ձգձգել բանակցությունները, որպեսզի ժամանակ շահի սիրիական կառավարության վրա քաղաքական ճնշում գործադրելու համար։ Դեռ ավելին, այժմ արդեն կասկած չի հարուցում այն, որ խուսափելով Սիրիային ուղղակի պատասխան տալուց, «Իրաք փեթրոլիումի» ղեկավարությունը ելնում էր երկրի քաղաքական կուրսում արմատական փոփոխման հնարավորություններից։ Ընդ որում խոսվում էր ինչպես պետական հեղաշրջման, այնպես էլ դեպի աջ որակական տեղաշարժի մասին, որոնց կարող էր հանգեցնել այդ շրջանում նկատվող երկրի ներքաղաքական իրադրության խիստ սրումը և հարևան երկրների հետ Սիրիայի հարաբերություններում լարվածության աճը։

Այսպես, հոկտեմբերի սկզբին Սիրիայում բացահայտվեցին երկու դավադրություններ, նախապատրաստված 1966 թ. փետրվարին իշխանությունից հեռացված աջ բաասիստներ Մ. Աֆլակի և Ս. Բիտարի, ինչպես նաև Բաաս կուսակցության ռեգիոնալ ղեկավարության նախ-

կին անդամ մայոր Ս. Հատումի կողմից[9]։ Սիրիայի պրեզիդենտ Ն. Աթասին, նշելով «Իրաք փեթրոլիումի» մասնակցությունը այդ դավադրություններին, ընդգծեց, որ նրանց նպատակն էր «ճանապարհ բացել հետադիմության, նավթային մոնոպոլիաների և իմպերիալիզմի համար, հարված հասցնել հեղափոխությանը և ի չիք դարձնել նրա նվաճումները ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ասպարեզներում»[10]։

Սիրիայում առանձնահատուկ մտահոգություն առաջացրին նաև սեպտեմբերի վերջին ի հայտ եկած հաղորդագրությունները իր սահմաններում Թուրքական զորքերի համակենտրոնացման մասին, որը կրում էր բացահայտ պրովոկացիոն բնույթ[11]։

Բանակցությունների երկրորդ փուլը Դամասկոսում նույնպես կոնկրետ արդյունքներ չտվեց։ Եվ նորից ընկերության ներկայացուցիչների մեկնումը Լոնդոն ուղեկցվեց սիրիա-իսրայելական սահմանում ռազմաքաղաքական լարվածության սրմամբ[12]։ Այսպիսի «համընկնումների» կրկնությունը նաև հետագայում, իրավունք էր տալիս կառավարող կուսակցության օրգան «Ալ Բաաս» թերթին պնդելու, որ զուտ ֆինանսական կարգի հարց քննարկելիս «Իրաք փեթրոլիումը» ներկայանում է ոչ թե որպես նավթարդյունահանող ընկերություն, այլ որպես մի քաղաքական կազմակերպություն, որը փակուղու առջև է կանգնեցնում և հետաձգում բանակցություններն «ամեն անգամ, երբ նոր դավադրություն է պատրաստվում (Սիրիայի դեմ—Հ. Գ.), և վերսկսում է դրանք, երբ այդ դավադրությունը խափանվում է...»[13]։

Մի շարք միջոցներ նախատեսելով Իսրայելի նախահարձակողական քաղաքականությանը դիմագրավելու համար, սիրիական ղեկավարությունը միաժամանակ միջոցառումներ իրականացրեց չեզոքացնելու համար Թուրքիայի պրովոկացիաները։ Այսպես, Սիրիայի վարչապետ Յու. Զուեյնը հոկտեմբերի 23-ին որոշեց կալանք դնել երկրում ապրող Թուրքահպատակների սեփականության վրա[14]։ Ընդունելով այդ որոշումը Սիրիան մասնավորապես ելնում էր նրանից, որ այդ շրջանում Թուրքիան ակտիվորեն միանում էր իմպերիալիստական շրջանների՝ սիրիական ժողովրդի և նրա ղեկավարների վրա ռազմաքաղաքական ճնշում գործադրելու բոլոր փորձերին։

Պարզ է նաև, որ Թուրքիան ինքն էլ շահագրգռված էր «Իրաք փեթրոլիումին» աջակցելու գործում, քանի որ ներկայացնելով իրեն որպես այդ ընկերության շահերի ջերմեռանդ պաշտպան, Անկարան հույս ուներ համագործակցություն հաստատել նավթային բիզնեսի հետ։ Այդ

կապակցությամբ պետք է հիշատակել արաբական մամուլի հաղորդումներն այն մասին, որ «Իրաք փեթրոլիումը» քննարկում է Թուրքիայի տարածքով նավթամուղ անցկացնելու նախագիծ, որի իրականացումը կախված կլինի Սիրիայի հետ ընկերության բանակցությունների արդյունքից[15]։ Պետք է նշել, սակայն, որ սիրիական ղեկավարությունը այդ նախագծին լուրջ նշանակություն չտվեց, այն դիտելով որպես դատարկ սպառնալիք[16]։

1966 թ. հոկտեմբերի 26-ին «սկսվեց բանակցությունների երրորդ փուլը, որի ժամանակ նախաձեռնություն հանդես բերելով Սիրիան նոր պահանջներ ներկայացրեց «Իրաք փեթրոլիումին»։ Այսպես, ընկերության ներկայացուցիչներին փոխանցվեց Սիրիայի դատական մարմինների որոշումը՝ «Իրաք փեթրոլիումին» մաքսային կարգը խախտելու համար 1,5 միլիոն դոլար տուգանելու մասին[17]։ Միաժամանակ Դեյր Զորի աշխատանքային հարցերի գծով արբիտրաժային դատարանը ընկերությունից պահանջեց 1,25 մլն. դոլար փոխհատուցում տրամադրել իր ընտանիքավոր ծառայողներին, որպես անապատային պայմաններում աշխատանքի հավելավճար[18]։ Ընկերության ներկայացուցիչների քննարկմանն հանձնվեց նաև Սիրիայի արհմիությունների ֆեդերացիայի հայցը, որում «Իրաք փեթրոլիումը» մեղադրվում էր նրանում, որ բժշկական ծախսերը մտցնելով ծախսերի բաժնում, նա խախտել է ոչ միայն գոյություն ունեցող պայմանավորվածությունը, այլև Սիրիայի սոցիալական ապահովության համակարգին 4,95 միլիոն դոլարի վնաս է հասցրել[19]։

Բանակցությունների հետագա ընթացքի համար կարևոր նշանակություն ունեին Բաաս կուսակցության 9-րդ ազգային համագումարի որոշումները։ «Նավթը,—ասվում էր գրանցում,—լինելով արաբների հիմնական ռեսուրսը, այժմ ի սպաս է դրված դաղութարարությանը ու նրա մոնոպոլիաներին և օգտագործվում է հետադիմական վարչակարգերին աջակցելու համար։ Արաբական նավթը պետք է ծառայի արաբական ամբողջ ժողովրդի շահերին և նրա գլխավոր խնդիրների՝ առաջին հերթին Պաղեստինի խնդրի լուծմանը»[20]։ Համագումարը նշեց նաև, որ Սիրիայի առաջ քաշած պահանջները «Իրաք փեթրոլիումին» հանգեցրին նրան, որ իմպերիալիստական շրջանները սկզբում փորձեցին երկրի հեղափոխական վարչակարգը տապալել ներքին հետադիմական ուժերով, իսկ այդ փորձերի ձախողումից հետո հակասիրիական քաղաքականությունն աշխուժացրին Իսրայելի ղեկավար շրջանները[21]։

Ավելի մանրամասն այս դրությունը վերլուծվեց Սիրիայի արտաքին գործերի մինիստր Ի. Մախուսի հայտարարությունում։ Նա նշեց, որ Իսրայելը, նավթային մոնոպոլիաների ետևում կանգնած իմպերիալիստական շրջանների կողմից նախապատրաստված, նախահարձակում է պատրաստում Սիրիայի դեմ։ Սիոնիստական պետության ակտիվացման հիմնական պատճառները Մախուսը համարում էր Սիրիայի «Իրաք փեթրոլիումին» ներկայացրած պահանջները և Բաաս կուսակցության ժողովրդադեմոկրատական պատերազմի միջոցով Պաղեստինն ազատագրելու կուրսը[22]։

Նոյեմբերի սկզբին Սիրիային պարզ դարձավ, որ բանակցությունների արդյունավետ շարունակումն անհնար է առանց արմատական միջոցներ ձեռնարկելու և որ ստեղծված իրավիճակում մնում է միայն մեկ այլընտրանք...պայքար բոլոր ձևերով, ընդհուպ մինչև նավթամղման դադարեցումը»[23]։

Սիրիայի դիրքերի ընդհանուր ամրապնդմանը, մասնավորապես «Իրաք փեթրոլիումի» հետ վարվող բանակցություններում, նպաստեց Սիրիայի և Եգիպտոսի միջև Կահիրեում 1966 թ. հոկտեմբերի 4-ին համատեղ պաշտպանության պայմանագրի կնքումը։ Այդ պայմանագիրը արաբական աշխարհի առաջադիմական ուժերի Սիրիական ժողովրդի օրինական իրավունքների համար մղվող արդարացի պայքարի հետ համերաշխության ամրապնդման գործոն էր։ Այս առիթով «Ալ Բաասը», նշում էր. «Հեղափոխական ուժերը, միավորելով արաբական զանգվածներին միասնական շարքերում, վճռական հակահարված են տալիս իմպերիալիզմի այդ նախահարձակողական պլաններին»[24]։

Նոյեմբերի 26-ին Սիրիան «Իրաք փեթրոլիումին» վերջնագիր ներկայացրեց, հայտարարելով, որ եթե ընկերությունն անմիջապես սպառիչ պատասխան չտա իր պահանջներին, ապա նրա նկատմամբ կձեռնարկվեն խիստ միջոցներ[25]։ Այդ որոշումն ընդունվեց հաշվի առնելով Սիրիայի համար հնարավոր բոլոր հետևանքները, այդ թվում նաև Իսրայելի հետ ռազմական առճակատումը։ «Սիրիական ժողովուրդը,— շեշտում էր այս կապակցությամբ սիրիական ղեկավարությունը,— անվախորեն դիմագրավում է «Իրաք փեթրոլիումին» և նրա ետևում կանգնած արտաքին ուժերին...։ Այսօր ժողովուրդն այդ առճակատմանը պատրաստված է ավելի լավ, քան երբևէ անցյալում»[26]։

Սիրիայի վերջնագրին ի պատասխան «Իրաք փեթրոլիումը» փորձեց վեճի մեջ ներքաշել Իրաքին և, օգտագործելով վերջինիս շահա-

գրգռվածությունը նավթամղումը շարունակելու գործում, երկպառակտությունը սերմանել արաբների միջև[27]։ Սակայն, ինչպես ցույց տվեցին նոյեմբերի 22-ին Դամասկոսում տեղի ունեցած սիրիա-իրաքյան բանակցությունները, որոնց ընթացքում կողմերը քննարկեցին սիրիական վերջնագրի բոլոր հնարավոր հետևանքները, «Իրաք փեթրոլիումի» կանխատեսումներն ու ծրագրերը իրական հիմք չունեն։ Բաղդադի «Ալ Բիլադ» թերթը, մեկնաբանելով Դամասկոսի բանակցությունները և ընդգծելով երկրի առաջադիմական ուժերի համերաշխությունը Իրաքի կառավարության դիրքորոշման հետ, նախազգուշացնում էր, որ ընկերության քաջքշուկի տակտիկան «Սիրիայի և Իրաքի նավթին վերաբերող իրավունքների նկատմամբ» կարող է նրա համար բացասական հետևանքների հանգեցնել[28]։

Հաշվի առնելով Իրաքի շահագրգռվածությունը նավթամղումը շարունակելու գործում, Սիրիան պաշտոնապես հավաստիացրեց, որ կապահովի նավթամուղի անխափան աշխատանքը նույնիսկ այն դեպքում, եթե «Իրաք փեթրոլիումը» փորձի արհեստականորեն դադարեցնել նրա աշխատանքը։ Սիրիան, միաժամանակ, բարձր գնահատեց իր մղած պայքարի հետ համերաշխության արտահայտումը, որը դրսևորվեց Իրաքյան կառավարության և արաբական աշխարհի այլ առաջադիմական ուժերի կողմից[29]։

Նոյեմբերի վերջին Սիրիայի կառավարությունը արգելեց ընկերության ամեն տեսակ սարքավորումների շարժումը պոմպակայանների միջև, իսկ դեկտեմբերի 8-ին որոշում ընդունվեց Բանիտս մղված յուրաքանչյուր տոննա հում նավթի դիմաց 5 շիլինգ 5 պենսի չափով հարկ գանձել։ Նույն օրը Սիրիայի կառավարությունը կալանք դրեց «Իրաք փեթրոլիումի» ամբողջ ունեցվածքի վրա, հայտարարելով, որ այն կշարունակվի այնքան ժամանակ, մինչև որ ընկերությունը չի վճարի 3,7 մլն ֆունտ ստեռլինգ՝ հունվարի 1-ից սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակամիջոցում նոր գներով նավթամղում կատարելու համար[30]։

Սիրիայի գործողություններն Իրաքի կողմից ընդհանուր հավանության արժանացան։ Դեկտեմբերի 9-ին Իրաքյան կառավարության ղեկավար Ն. Տալերը, արժանիորեն գնահատելով Սիրիայի ձեռնարկած միջոցառումները, միաժամանակ ընդգծեց, որ Սիրիայի կողմից «Իրաք փեթրոլիումի» ունեցվածքի վրա դրած կալանքը «չպետք է, որ իրաքյան նավթի տեղափոխումը կանգնեցնելու կամ նրա արտահանման չափերը կրճատելու համար առիթ տա»[31]։

«Իրաք փեթրոլիումի» ունեցվածքի վրա կալանք դնելու մասին լուրերը ԱՄՆ-ում և Անգլիայում շատ լուրջ անհանգստություն առաջացրեցին։ Այսպես, ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի ներկայացուցիչն այդ առիթով հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որում նշեց, որ ԱՄՆ-ը շատ ուշադիր և անհանգստությամբ է հետևում դեպքերի զարգացմանը, և միաժամանակ հասկացրեց, որ ամերիկյան կառավարությունը ծայրահեղ բացասական կգնահատի նավթարդյունաբերող երկրների և նավթային մոնոպոլիաների միջև գոյություն ունեցող հարաբերությունների բնույթն արմատականորեն փոխելու ցանկացած փորձը[32]։

Այնուամենայնիվ, Սիրիայի վճռական գործողությունները հանգեցրին այն բանին, որ «Իրաք փեթրոլիումը» ստիպված եղավ որոշ զիջումներ անել և առաջարկեց վեճը լուծել Սիրիայի օգտին տարեկան կոնցեսիոն մասնահանումները մոտավորապես 2,55 մլն ֆունտ ստեռլինգի չափով ավելացնելու միջոցով։ Սիրիան, սակայն, հրաժարվեց այդ «նպաստից», կրկին հաստատելով իր սկզբունքային պահանջները՝ իրեն հասանելիք մասնահանումները 50%-ի չափով ավելացնելու և 40 մլն ֆունտ ստեռլինգ իրեն հասցրած վնասներն հատուցելու մասին[33]։ Ի պատասխան՝ «Իրաք փեթրոլիումի» ղեկավարությունը դեկտեմբերի 10-ին դադարեցրեց իրաքյան նավթի տեղափոխումը սիրիական Բանիաս նավահանգիստը[34]։

Չնայած նրան, որ նավթամղման դադարեցումը զգալի հարված էր Իրաքի շահերին, Բաղդադը պաշտոնապես շարունակում էր պաշտպանել սիրիական պահանջները։ Դեկտեմբերի 10-ին վարչապետ Ս. Տալեբն հայտարարեց, որ Իրաքը ցանկացած պարագաներում «Իրաք փեթրոլիումից» պիտի պահանջի իր հասույթի վճարումը նավթի տարեկան սովորական հանույթի չափերով[35]։ Իրաքի այսպիսի դիրքորոշումը Սիրիային թույլ տվեց իր հերթին լրացուցիչ ճնշում գործադրել ընկերության վրա, և դեկտեմբերի 13-ին փակել իր տարածքով դեպի լիբանանյան Տրիպոլի նավահանգիստն անցնող նավթամուղը[36]։

Ողջունելով Իրաքի դիրքորոշումը և ընդգծելով իր գործողությունների համարարաբական բնույթը, Սիրիան նոր արեց նավթային մոնոպոլիաների թելադրանքի վերացման մեջ շահագրգռված բոլոր ուժերին աջակցել իր իրավացի պահանջներին։ Ինչպես նշվում էր սիրիական կառավարության պաշտոնական հայտարարությունում «...Իրաքի արաբ ժողովուրդն՝ ու արաբական մյուս երկրների ժողովուրդները Սիրիային

աջակցում են, քանի որ լավ են հասկանում նրա դիրքորոշման սկզբունքային դրդապատճառները, որը թելադրվում է ոչ թե մասնավոր նկատառումներով, այլ որոշվում է համաարաբական շահերից ելնելով»[37]։

«Իրաք փեթրոլիումի» փորձերը՝ բախել Սիրիայի և Իրաքի շահերը ոչ միայն ցանկացած նպատակին չհանգեցին, այլ ընդհակառակը. նպաստեցին այն բանին, որ երկու արաբական երկրներն հանդես դան միացյալ ճակատով։ Նրանց դիրքորոշման միասնականությանը հավանություն տալով բաղդադյան «Աս-Սաուրա ալ-Արաբիյան» ընդգծում էր, որ Իրաքը նավթային մոնոպոլիաների վրա է դնում» նրանց օբստրուկցիոնիստական դիրքորոշման, քաշքշուկի և Սիրիայի պահանջներին պատասխան տալուց խուսափելու պատճառով առաջացած լարված իրադրության ստեղծման» պատասխանատվությունը[38]։ Իր հերթին Սիրիան, նշելով սիրիա-իրաքյան հարաբերություններում երկպառակտություն սերմանելու իմպերիալիստական շրջանների փորձերի անհաջողությունը, ընդգծում էր, որ Իրաքն ի վիճակի է, ինքնուրույն մշակել իր նավթային հարստությունները, և որ «Իրաք փեթրոլիումի» գործողությունները միայն կարագացնեին նրա սեփականության ազգայնացման վերաբերյալ իրաքյան կառավարության որոշումը[39]։

Դեկտեմբերի 16-ին Իրաք ժամանեց Սիրիայի արտաքին գործերի մինիստր Ի. Մախուսը, որին իրաքյան ղեկավարները նորից հավաստիացրեցին իրենց դիրքորոշումը[40]։ Իր հերթին Ի. Մախուսը հայտարարեց, որ Սիրիայի տարածքով անցնող «Իրաք փեթրոլիումի» նավթամուղն իրականում իրաքյան ժողովրդին է պատկանում և միաժամանակ նշեց ընկերության ազգայնացման հարցը քննարկելու անհրաժեշտության մասին։ Նա ընդգծեց նաև, որ ստեղծված իրադրությունում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում արաբական երկրների ակտիվ հակաիմպերիալիստական դիրքորոշումը, և որ այդ առումով նրանց դերն այսօր «չի տարբերվում 1956 թ. սուեզյան պատերազմում նրանց կատարած դերից»[41]։

Բաղդադում Սիրիայի կողմից «Իրաք փեթրոլիումի» ազգայնացման հարցի բարձրացումը տագնապ առաջացրեց ոչ միայն ընկերության ղեկավարությունում, այլ նաև բրիտանական կառավարությունում։ Սթեն նախկինում Անգլիայի ղեկավար շրջանները խուսափում էին որևէ հայտարարություն անելուց, միտումնավոր ձևով ընդգծելով Սիրիայի և «Իրաք փեթրոլիումի» միջև ծագած տարաձայնությունների զուտ տնտե-

սական և ֆինանսական բնույթը, ապա այդ պահին նրանք որոշեցին իբևնց վերաբերմունքը դրսևորել բանակցությունների նկատմամբ և սիրիական կառավարության վրա քաղաքական ճնշում գործադրել։ Այդ բանն արվեց բավականին քողարկված ձևով։ Այսպես, Դամասկոսում Անգլիայի դեսպան Ռ. Էվանսը Սիրիայի Արտաքին գործերի մինիստրությանն հայտարարեց. քանի որ «Իրաք փեթրոլիումը» Անգլիայում պաշտոնապես հաշվառված ընկերություն է, ապա անգլիական կառավարությունն իրևն իրավունք է վերապահում մեկնաբանել բանակցությունների ընթացքը առաջիկա փուլերում[42]։

Իր հերթին «Իրաք փեթրոլիումը» իրաքյան կառավարությանը տեղյակ պահեց, որ նավթամուղի փակման կապակցությամբ չի կարող ընթացիկ տարում Իրաքին ամբողջությամբ վճարել կոնցեսիոն մասնահանումները։ Պարզ է, որ «Իրաք փեթրոլիումի» հայտարարությունը Սիրիա-իրաքյան համերաշխությունում երկպառակտություն սերմանելու նոր փորձ էր[43]։ Այս հայտարարության հակաօրինական լինելու մասին նշեց մասնավորապես բաղդադյան «Սաութ ալ-Արաբը», որը գրեց, թե «Իրաք փեթրոլիումն» իրավունք չունի ոտնահարել իրաքյան ժողովրդի շահերը միայն այն բանի համար, որ Բաղդադը պաշտպանում է Սիրիայի իրավացի պահանջները[44]։

Իրաքի՝ Սիրիային պաշտպանելու կուրսի ուժեղացմանը նպաստեց եգիպտական ղեկավարությունը, որը տեղեկացրեց իրաքյան կառավարությանն այն մասին, թե Եգիպտոսն իրեն համարում է վեճի մեջ ներքաշված անմիջական կողմ[45]։ Միաժամանակ Ազգային ժողովի հատուկ հրավիրված նիստում Եգիպտոսի վարչապետ Ա. Սիդկին նշելով Եգիպտոսի համերաշխությունը Իրաքի արդարացի պահանջների հետ միաժամանակ, ընդգծեց, որ իր երկիրն «ամբողջովին պաշտպանում է Սիրիայի կառավարությանը ժողովրդի շահերի պաշտպանության գործում»[46]։

Նավթային մոնոպոլիաների տնտեսական թելադրանքի, «Իրաք Պեթրոլիումի» ետևում կանգնած ԱՄՆ-ի և Անգլիայի իմպերիալիստական շրջանների՝ արաբական առաջադիմական վարչակարգերի, առաջին հերթին Սիրիայի, վրա ռազմաքաղաքական ճնշում գործադրելու դեմ ուղղված պայքարում միջարաբական համագործակցության ամրապնդման հարցերը քննարկվեցին 1967 թ. փետրվարին Իրաքի ղեկավարների Կահիրե և Դամասկոս կատարած այցելությունների ընթացքում։ «Այդ այցելությունները,—նշում է Օ. Գերասիմովը,—որոնց ըն-

թացքում քննարկվեցին առաջին հերթին նավթային պրոբլեմները, ակնհայտորեն ազդեցին նավթային ճգնաժամի կարգավորման վրա»[47]։

Արդյունքում «Իրաք փեթրոլիումը» ստիպված եղավ վերսկսել բանակցությունները Սիրիայի հետ։ 1967 թ. մարտի 2-ին Դամասկոսում ստորագրվեց Սիրիայի տարածքով Իրաքյան նավթի տեղափոխման նոր համաձայնագիր։ Սիրիայի օգտին կոնցեսիոն մասնահանումները բարձրացվեցին 50%-ով, որը ուժի մեջ էր մտնելու հետին թվով՝ 1966 թ. հունվարի 1-ից և Սիրիայի կառավարությանը լրացուցիչ տալիս էր 11 միլիոն դոլար։ Միաժամանակ «Իրաք փեթրոլիումը» պարտավորվում էր Սիրիային վճարել 1955—1965 թթ. առաջացած պարտքը 40 միլիոն ֆունտ ստեռլինգի չափով[48]։

Վերջում նշենք, որ Սիրիայի հաջողությունը «Իրաք փեթրոլիումի» հետ կոնցեսիոն համաձայնագրի վերանայման համար մղված պայքարում ուներ ոչ միայն կարևոր տնտեսական, այլև քաղաքական մեծ նշանակություն։ Հասնելով իր օրինական պահանջների ամբողջական բավարարմանը, Սիրիան ամբողջ արաբական աշխարհին ցույց տվեց նևոգաղութարարության քաղաքականությանը դիմակայելու խնդիրների արմատական լուծման հնարավորությունը և, այդպիսով, ոչ միայն նպաստեց արաբական ժողովուրդների նավթային հարստությունների աղգայնացման կուրսի ամրապնդմանը[49], այլև զգալի հարված հասցրեց Մերձավոր արևելքում իմպերիալիզմի դիրքերին։

Գ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

БОРЬБА СИРИИ ЗА ПЕРЕСМОТР КОНЦЕССИОННОГО СОГЛАШЕНИЯ С «ИРАК ПЕТРОЛЕУМ КОМПАНИ»

Резюме

В августе 1966 г. сирийское правительство потребовало от империалистического нефтяного консорциума «Ирак Петролеум Компани» увеличить на 50% отчисления за транзит нефти из района Киркука (Ирак) в сирийский порт Баниас, а также выплатить Сирии долг в размере 40 млн. ф. ст., образовавшийся в период 1955—1965 гг. в результате различных финансовых махинаций совета директоров консорциума.

Добившись в марте 1967 г. полного удовлетворения своих законных требований, Сирия наглядно продемонстрировала все-

му арабскому миру возможность коренного решения задач по оказанию противодействия политике неоколониализма и тем самым не только активно способствовала укреплению курса на национализацию нефтяных богатств арабских народов, но и нанесла ощутимый удар по позициям империализма на Ближнем Востоке в целом.

1 Л. И. Медведко. К востоку и западу от Суэца. М., 1980. с. 74.

2 Р. Н. Андреасян, А. Я. Эльянов, Ближний Восток, Нефть и независимость. М., 1961; Л. И. Комлев. В борьбе с нефтяными спрутами. М., 1976.

3 ١٩٦٦-٨-٢٢ ،"البعث"

4 The Middle East and North Africa 1966—67. Europa Publications Limited, London, 1966, p. 65

5 Р. Н. Андреасян, А. Я. Эльянов, *նշվ., աշխ., էջ 10։*

6 J. Kimche. Palestine or Israel. The untold story of why we failed, 1917—1923: 1967—1973. London, 1973, p. 231.

7 Նավթային մոնոպոլիաների նման խախտումների մասին մանրամասն տե՛ս Р. Н. Андреасян А. Д. Казюков ОПЕК в мире нефти. М., 1978, с. 27—40.

8 The Middle East Journal, Winter 1967, vol. 21, № 1.

9 Современная Сирия (справочник). М., 1974, с. 217.

10 „The Daily Star", 8·10·1966.

11 ١٩٦٦-١٠-٢٥ ،"البعث"

12 Select Chronology and Background Documents relating to the Middle East. Washington, 1975, p. 20.

13 ١٩٦٦-١١-١٦ ،"البعث"

14 The Midle East Journal, Winter 1967, vol. 21, № 1.

15 ١٩٦٦-١٠-٢٥ ،"صوت العرب"

16 ١٩٦٦-١٠-٢٦ ،"الثورة"

17 ١٩٦٦-١٠-٢٧ ،"الثورة"

18 Նույն տեղում։

19 ١٩٦٦-١٠-٣١ ،"الاشتراكي"

20 Statement of the National Command About the Achievements of the 9th National Congress. The Arab Baath Socialist Party. National Command. Damascus, 31·10·1966, p. 55.

21 Նույն տեղում, էջ 35։

22 „The Daily Star", 25·10·1966.

23 ١٩٦٦-١١-١٠ ،"البعث"

24 ١٩٦٦-١١-٢٢ ،"البعث"

25 „The Daily Star", 21·10·1966.

26 ١٩٦٦-١١-٢٢ ،"البعث"

27 Նավթամուղով լիբանանյան Տրիպոլի և Միրիական Բանիաս նավահանգիստներ էին մղվում իրաքյան նավթի մոտ 70%-ը։ Հնդ որում Բանիաս էր մղվում տարեկան 26 միլիոն տոննա հում նավթ, այսինքն՝ նավթամուղով անցնող նավթի մոտ 60%-ը։ Նավթամուղի փակումը կհանգեցներ Իրաքյան նավթի արդյունահանման ընդհանուր անկմանը։ („The Daily Star", 11.12.1966.

28 ١٩٦٦-١١-٢٣ ،"البلد"

29 „The Daily Star", 26.11.1966.

30 „The Daily Star", 9.12.1966.

31 „The Daily Star", 10.12.1966.

32 „The New York Times", 8.12.1966

33 „The Daily Star", 10.12.1966.

34. О. Герасимов, Иракская нефть. М., 1969. с. 139.

35 „The Daily Star", 11.12.1966.

36 The Middle East Journal, Spring 1967, vol. 21, № 2

37 ١٩٦٦-١٢-١٣ ،"البعث"

38 ١٩٦٦-١٢-١٣ ،"الثورة العربية"

39 „The Daily Star", 14.12.1966.

40 О. Герасимов Նշված աշխ., էջ 140.

41 ١٩٦٦-١٢-١٧ ،"البعث"

42 „The Daily Star", 16.12.1966.

43 О. Герасимов Նշված աշխ., էջ 141.

44 ١٩٦٦-١٢-١٨ ،"صوت العرب"

45 „The Daily Star", 19.12.1966.

46 ١٩٦٦-١٢-٢١ ،"الاهرام"

47 О. Герасимов Նշված աշխ., էջ 142.

48 The Middle East Journal. Summer 1967, vol. 21, № 3.

49 Resolutions of Sixth Arab Oil Conference (Baghdad,' March 13)—Arab Political Encyclopedia. Documents and Notes. Fifteenth Year, January—June 1967, Cairo, p. 127—128.